

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման
չափանիշները

12-րդ դասարան

1-ին հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 1 միավոր, 3-րդ՝ 2 միավոր, 4-րդ՝ 1,5 միավոր:
2-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 1 միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 1 միավոր:
3-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 1 միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 2 միավոր:
4-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ ենթահարց՝ 4 միավոր:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի
պատասխաններ

12-րդ դասարան

1. Ծմակուտի քուրմը հայ արձակի տաղանդավոր բնապաշտն ու մարդախույզն է՝ Հրանտ Մաթևոսյան երևույթը, ով հայ և համաշխարհային ընթերցողի առաջ բացեց մի նոր աշխարհ՝ Ծմակուտ պայմանական անունով, այնպես, ինչպես Մև ցելերի սերմնացանը՝ Ակսել Բակունցը բացահայտեց Կյորեսը, Ինչպես Հակոբ Մնձուրին բացահայտեց Արմտանի կապույտ լեռների տխրությունը, ինչպես Թումանյանը դարձավ «մի ժողովրդի ազնիվ կենսագիր»: Իր իսկ վկայությամբ Հրանտ Մաթևոսյանը հենց այս գրականության ժառանգորդն է՝ իր ինքնության ու անհատականության կնիքով: «Մաթևոսյանի Ծմակուտն ու ծմակուտեցին տարիներ առաջ են մտել գրականության մեջ և շարունակում են կենսական տարածություններ նվաճել՝ զուգահեռվելով գրականության հավիտենական ընթացքի հետ, ինչպես Աբովյանի Քանքեռն ու Չարենցի Կարսը, Բակունցի Գորիսն ու Մահարու Վանը»: Հայրենի եզերքի և նրա մարդկանց գեղարվեստական մարմնավորմամբ Մաթևոսյանը ստեղծեց իր աշխարհը, իր հերոսներին կանգնեցրեց ընթերցողի առաջ և նրանց բեկեց հենց ընթերցողի հոգեբանության և ընկալումների մեջ: Ծմակուտում ապրում են մի Միմոն «որին ամբողջ աշխարհը պարտք է», մտերիմների հավիտենական հալածանքներից ու պատճառած հոգսերից դառնացած մի Ադուն, մի Բշխան, որ իր փիլիսոփայությամբ հաստատում է ցեղի դիմադրողականությունը, մի Ալիս, որ ապրեցնում է Ծմակուտը, մի Աստղաճակատ քուռակ, որ հաստատում է կյանքի հաղթանակը: Իհարկե, Մաթևոսյանը ոչ միայն հաջողել է՝ ստեղծելով իր Ծմակուտն ու նրա մարդկանց մաքառումների պատմությունը, այլև գրականություն բերեց իքնավստահ ու մտածող, հպարտ ու խոնարհ կերպարներ, որոնք մեզ համար բացահայտեցին հենց մեզ: Նա մեր գրականությանը տվեց անընդհատ ու անվերջ վերադարձ:

Մնացյալը՝ ինքնուրույն:

2. Վարդգես Պետրոսյանը XX դարավերջի փնտրված հեղինակներից է: գրող, ով իր ողջ կյանքը նվիրեց իր հայրենիքի ցավերը բուժելուն, ով խոսեց բոլոր տարիքների լեզվով, ով գտավ երիտասարդ հոգիներին հասկանալու բանալին, ով սրտացավությամբ ապրեց նրանց «ապրած և չապրած տարիները», նրանց հետ կիսեց հասարակությունից չհասկացված ու օտարված լինելու մղձավանջը: Գրող, ով հրաշալի գիտակցում էր «ստորագրության պատիվը» և մինչև իր եղերական վախճանը արժանապատվորեն պահեց այդ ծանր ու դժվարին բեռը: նա մեծ

հրապարակախոս էր, նա առաջիններից էր, ով համարձակորեն պատռեց կեղծ հայրենասիրության դիմակը, ով ահագանգեց դատարկվող գյուղերի մասին, ով կարդաց պատանիների հոգիները՝ դառնալով նրանց խոստովանահայր- դաստիարակը: «Հայկական էսքիզներ» էստենների էջերում նա ն՛ կիսում էր կարոտի ցավը, ն՛ սովորեցնում հայրենիքը չսիրել հայրենիքից դուրս, նա մերժում էր մերօրյա փախուստը հայրենիքից, նա կողմ էր անտառին՝ ինքնություն մտածող, ինքնություն իր ուղին հարթող սերնդին, և դեմ էր գազոնին՝ համահարթեցված, տնաբույս ու համակերպվող մարդու տեսակին:

Նա շարունակում էր հոգեբանական գրականության ավանդները, «կարդում» էր պատանիների հոգիները, սովորեցնում էր մտածել, ներել, արարել:

«Վերջին ուսուցիչը» վիպակը Պետրոսյանը գրել է 1978-ին և այն նվիրել իր սիրելի ուսուցիչներին, որոնց կերպարները կերտել է՝ ի դեմս գրականության ուսուցիչ Վահան Մամյանի: Ինչո՞ւ հասկապես գրականության ուսուցչին է վերապահված մարդակերտության դժվարին արվեստը, որովհետև «գրականությունը բոլորին է պետք»: Միազամայն իրավացի է մաթեմատիկայի ուսուցիչ Դանիելյանը, երբ աշակերտներին համեմատում է բազմաթիվ անհայտներով հավասարման հետ, սակայն չի փորձում կամ չի կարողանում լուծել դրանցից գոնե մեկը: Իսկ գրականության ուսուցչին կարճ ժամանակում հաջողվում է նվաճել նրանց վստահությունն ու անթաքույց հարգանքը. Աշակերտները վստահում են իրենց նոր դասղեկին, քանի որ նա չի պարտադրում իր կամքը, չի ասում ծեծված արտահայտություններ հնազանդության ու պարտականության մասին, այլ սովորեցնում է իր անձնական օրինակով, մղում է անկեղծության, իսկ «անկեղծությունը պարտավորությամբ չի լինում»: Նոր ուսուցիչը պատմում է հեքիաթի մասին և հորդորում. «Հեքիաթներ ունեցեք: Ձեր հեքիաթը: Ձեր էության ինչ-որ մասով ապրեք հեքիաթի մեջ»: Եվ երեխաները հյուսում են իրենց կյանքի նոր հեքիաթը, որի հերոսները իրենք են, իրենց ընկերները, ուսուցիչները: Մամյանի հանձնարարած շարադրության թեմաները անկեղծանալու, ինքնամաքրվելու հնարավորություն են տալիս, նրանք գրում են առանց ստորագրության, իսկ ուսուցիչը չի գնահատում նրանց: հյուսվում է մի գեղեցիկ մտերմություն ուսուցչի ու աշակերտների միջև, նրանք սովորում են ներել միմյանց. Ուսուցիչը սովորեցնում է. «կարողացեք մոռանալ, եթե դառնացրել էք իրար», և նրանք կրակի են մատնում իրենց դառնություններն ու անգամ Ավստրալիա մեկնող Արմենն է ինքնաթիռից իջնում և մնում իր երկրում, իր ընկերների հետ:

Մամյանն իր սաներին մղում է բարության. «Բարությունը անպաշտպան է, բարությունը բռունցքներ չպիտի ունենա: Ուրիշի բարությունը կարող է ծիծաղելի թվալ, եթե ինքդ բարի չես»: Մամյանը նրանց սովորեցնում է գիրք կարդալ. «Գիրք կարդալը ծով մտնելու նման է, պիտի գլուխդ պտտվի ծովի անսահմանությունից...»: Մամյանի մուտքը դպրոց փոխում է անգամ ուսուցիչների մտածողությունը, նրանք էլ են սկսում մտածել իրենց բացթողումների մասին: Դարձի է գալիս անամ պաշտոնյան. ուրեմն՝ կարելի է գեղեցիկ ապրել: Ինչո՞ւ վերջին ուսուցիչ չի լինում, որովհետև Մամյանից առաջ եղել է նրա ուսուցչուհի Նվարդ Պարոնյանը, Պարոնյանից առաջ եղել են ուրիշները, և Մամյանից հետո էլ գալու են աշակերտին անկեղծության, բարության, հայրենասիրության մղող ուրիշ ուսուցիչներ:

Վարդգես Պետրոսյանն այս վիպակում արժարժում է բազմաթիվ թեմաներ, բացահայտեք այդ թեմաները և սովորեք բարություն, ներում, հաղորժողականություն, սիրեք ձեր տունը, բակը, հայրենիքը: «Միրեցեք զմիմեանս», - պատգամում է Աստվածաշունչը:

3.Վանի Խառակոնիս գյուղում ծնված,քուչակյան հայրեններով սնված և գաղթի ճանապարհին հարազատներին կորցրած գրողը՝ Նաիրի Չարյանը, հայրենիքում էլ մի պահ կորցրեց զգոնությունը և տրվեց ժամանակի ավերիչ շնչին: Նա արյունախում անվանեց հայ որբերին փրկող մեծ գորավարի սուրը, նա հայրենիքի դավաճանի խարանը դրեց «ալպիական մանուշակի» գեղեցկությունը երգող եղերական Բակունցի ու «խելագարված ամբոխներին» դեպի արևը տանող.«Հարդագողի ոսկեման ուղիներում» անգամ Չարյանին երազներ պարզեցող ողբերգական Չարենցին: Հետո զոջումի դառը խոսքեր մրմնջաց. Ես մոլորվել եմ շատ անգամ, Դու ինձ ների՛ր ,իմ ժողովուրդ,

Խաբել են ինձ կանչերը սուտ, Ես մոլորվել եմ շատ անգամ:

1930-ականներին Անդրանիկը նրա համար արյունարբու դահիճ էր, ժողովուրդների անդորրը խանգարող էլուզակ, իսկ 1960-ական թվականներին գրած ասքում Չարյանը խոստովանություն է անում մեծ գորավարի շիրմի առաջ՝ Երբ դեռ այգաբացի մշուշն էր իմ հոգում, Հիմարաբար, հիմարաբար, հիմարաբար, Քո սուրն ինքնապաշտպան,Ես անվանել եմ արնախում...

Բանաստեղծը Պեր- Լաշեզում է՝ գորավարի մահարձանի առաջ. Հայոց պանթեոնից մեծ գորավարի բացակայությունը խորհրդանշում է հայոց ողբերգական ճակատագիրը:

Ինչո՞ւ ես դու ապաստանել այստեղ,Այս հեռավոր շիրիմների շարքում:

Ինչո՞ւ ես մատնված օտարության, Դու չե՞ որ ժողովուրդ ունես, Ծննդավայր և տուն...

Տնքում է դարերով անպատասխան Հայոց բախտի անպատասխան «ինչո՞ւն»: Բանաստեղծության մեջ առկա ինքնաքննությունը որոշակի քնարական դրամատիզմ է հաղորդում նրան, բացահայտվում են նաև հեղինակի կենսագրության տխուր ու արատավոր դրվագները: Բանաստեղծության մեջ Չարյանը Անդրանիկին համեմատում է Իտալիայի ազգային հերոս Գարիբալդիի հետ՝ նրան անվանելով հայոց Գարիբալդի:

Բանաստեղծը համոզված է, որ Հայաստանի լուսավոր հրապարակներում ու գրական երգերում քանդակվելու են մեծ գորավարի արձանն ու կերպարը: Անկախությունից հետո իրականություն դարձավ Չարյանի կանխատեսումը:

Ի՞նչ երկխոսություն կարող է լինել բանաստեղծի և գորավարի միջև՝ գրի՛ր ինքդ:

4.XX դարը հայ ժողովրդի անկումների ու վերելքների դարաշրջանն է. ջարդ, կոտորած, ցեղասպանություն, տարագրություն, պետության վերահաստատում, շոնդալից զարգացում, արվեստի բոլոր ճյուղերի հաղթարշավ. Գրականություն, երաժշտություն, նկարչություն, ճարտարապետություն, քանդակագործություն: Այս հաղթարշավը երկատված էր, քանի որ ցեղասպանության արդյունքում հողագնդով մեկ ցիր ու ցան եղան հայության «խլյակները»,ապաստանեցին օտար ափերում, բայց Աստծո գործությամբ կարողացան վերագտնել իրենց, հավատարիմ մնալ իրենց արմատներին: ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Լիբանանում ու Սիրիայում, Սիդնեյում ու Կահիրեյում և այլուր ստեղծվում են հայկական գաղթօջախներ, որոնք համախմբում են տարագիր հայրենակիցներին և հիմնում կրթօջախներ, կառուցում եկեղեցիներ և կազմակերպում հոգևոր կյանքը: Սկզբնավորվում է սփյուռքահայ գրականությունը: Առաջին սերնդի գրողները հիմնականում ստեժագործում են հայերեն՝ ստեղծելով կարոտի գրականությունը՝ Հակոբ

Օշական, Համաստեղ, Անդրանիկ Ծառուկյան, Մուշեղ Իշխան, Հակոբ Կարապենց և այլք: Բայց կային նաև մի շարք գրողներ, որոնք ստեղծագործում էին այն երկրների լեզուներով, որտեղ ապրում էին, և սա բնավ էլ դատապարտելի չէ, քանի որ այդ կերպ նրանք աշխարհին էին ներկայացնում հայ ժողովրդի հետ կատարված ցեղասպանությունը՝ առաջավոր մարդկության ուշադրությունը հրավիրելով մեր ժողովրդի կրած անլուր տառապանքների վրա՝ սկիզբ դնելով Հայ դատի արդարացի լուծման գործընթացին: Ուր էլ նետել է ճակատագիրը հային, նա գտել է ինքնարտահայտվելու ձև, ստեղծել է թերթ ու լրագիր, պայքարել է անխուսափելի ուժացման դեմ՝ անջնջելի հետք թողնելով այդ ժողովուրդների գրականության, ճարտարապետության, երաժշտության, նկարչության, քաղաքականության մեջ: XX դարում ասպարեզ եկան ռուսագիր, անգլիագիր, ֆրասագիր, իսպանագիր, բուլղարագիր, թուրքագիր հայ գրողներ, նրացից շատերին բնութագրական է Մարոյանի խոստովանություն-բանաձևումը. «Թեև անգլիերեն կը գրեմ ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Միջավայրը, որու մասին կը գրեմ, ամերիկյան է, գործածած բառերս անգլերեն են: Ոգին, որ կ'ստիպեինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ: Խորապես կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը»: